ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՎԱՐԴԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Էլ.փոստ VARDASHENI@ mail.ru հեռ. 091-16-20-71

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ./15

22 դեկտեմբերի 2013 թվականի

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ և ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ :

Ղեկավարվելով „Տեղական տուրքերի և վճարների մասին „ Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածների , ինչպես նայև "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդ-վածի 18-րդ կետի պահանջներով՝

Ավագանին

Որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի շինությունների /ներառյալ ոչ հիմնական/ տեղադրման / թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական օբյեկտների համար

1) մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի , այդ թվում այգեգործական /ամառային / տների, ինչպես նաև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ:

2)սույն կետի <<1)>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա.201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000դրամ:

բ.501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000դրամ:

գ.1001 և 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000դրամ:

դ.3001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100000դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3)20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ:

4)20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման,արդիականացման աշխատանքների/բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1/չի նախատեսվում կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների/այդ թվում ստորգետնյա/հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ:

2/բացի օբյեկտի վերակառուցման,ուժեղացման,վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից,նախատսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների/այդ թվում ստորգետնյա/հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն ,ապա բացի սույն կետի “ա”ենթակետով սահմանված դրույքաչափի,կիրառվում են նաև նոր շինարարաության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով:

3/նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների/այդ թվում ստորգետնյա/շինարարության կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն,ապա սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն ,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինարարությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000դ.:

<<1>>,<<2>>,<<3>> կետերի համար կիրառել 0.5 գործակիցը:

4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1/ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500դրամ:

5.Համայնքի տարածքում

1/բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվել է յուրաքանչյուր օրվա համար՝ յուրաքանչյուր քմ 200 դրամ:

2/համայնքի տարածքում հեղուկ վառելիքի,սեղմված,բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրացված առևտրի կետերում,հեղուկ վառելիքի և (կամ)սեղմված,բնականկամհեղուկացվածնավթայինգազերիտեխնիկականհեղուկներիվաճառքիթույլտվությանհամարսահմանվումէ 150000դրամ:

3/համայնքիտարածքում գտնվող խանութներում,կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար սահմանվումէ 40000 դրամ:

6.Համայնքիարխիվիցփաստաթղթերիպատճեներևկրկնօրինակներտրամադրելուհամարընթացիկտարվահամարսահմանել՝ 1000 դրամ:

Տեղական վճարների դրույքաչափերը

1.Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության տակ գտնվող հողեր հատկացնելու,հետ վերցնելու և վարձակալության տրամադրելո դեպքում անհրաժեշտ չափագրային այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 դրամ:

2.Աղբահանություն կատարելու դիմաց ծառայության վճար՝ 0 դրամ:

Ավագանու անդամներ՝

Կ.Նիկալայան /կողմ/

Ս.Հայրապետյան /կողմ/

Ա.Հունանյան /կողմ/

Ա.Կարապետյան /կողմ/

Խ.Հայրապետյան /կողմ/

Համայնքի ղեկավար **Գ.Բարխոյան**